## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի ՀՕ-202-Ն ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Հոդված 20.** Օրենսգրքի 27-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցությունները նախընտրական քարոզչության նախապատրաստման, կազմակերպման և իրականացման հետ կապված ծախսերն իրականացնում են նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին են կատարվում՝

1) զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման ծախսերը.

2) համացանցով նախընտրական քարոզչության իրականացման, այդ թվում՝ քաղաքական գովազդի հրապարակման ծախսերը.

3) նախընտրական քարոզչության ընթացքում սոցիոլոգիական հարցումների և հետազոտությունների իրականացման ծախսերը.

4) նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և նախընտրական քարոզչության հետ կապված այլ միջոցառումներ անցկացնելու նպատակով դահլիճների, տարածքների վարձակալման ծախսերը.

5) ընտրական շտաբների տեղակայման նպատակով տարածքների վարձակալման ծախսերը.

6) քարոզչական պաստառների, քարոզչական տպագիր և այլ նյութերի պատրաստման (տեղադրման), ձեռքբերման, փակցման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի, ներառյալ տպագիր նյութերի պատրաստման ու տարածման հետ կապված ծախսերը.

7) նախընտրական քարոզչության նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների վարձակալության հետ կապված ծախսերը (բացառությամբ մինչև 7 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների).

8) նախընտրական քարոզչության իրականացման նպատակով կազմակերպված մշակութային կամ մարզական միջոցառումների անցկացման հետ կապված ծախսերը.

9) վստահված անձանց տրվող փոխհատուցման ծախսերը, եթե մեկ վստահված անձի հաշվով փոխհատուցման գումարը գերազանցում է 10 000 դրամը:

Նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և նախընտրական քարոզչության հետ կապված այլ միջոցառումներ անցկացնելու նպատակով դահլիճների, տարածքների և ընտրական շտաբների կոմունալ ծախսերը, ինչպես նաև նախընտրական քարոզչության նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների վառելիքի հետ կապված ծախսերը կարող են չներառվել նախընտրական հիմնադրամում:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Նախընտրական հիմնադրամից կատարվող ծախսերի առավելագույն չափը սահմանվում է սույն օրենսգրքով: Նախընտրական հիմնադրամից վճարումները կատարվում են անկանխիկ եղանակով:».

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Եթե Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը պարզում է, որ նախընտրական քարոզչության համար ձեռք բերված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը շուկայական արժեքով չեն ներառվել նախընտրական հիմնադրամի ծախսերում, ապա հարուցում է վարչական վարույթ: Եթե հարուցված վարույթի ընթացքում հիմնավորվում է նշված տեղեկությունը, ապա թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ կիրառվում է վարչական տույժ՝ հիմնադրամի ծախսերում չներառված ծախսերի եռապատիկի չափով:».

~~4) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~«4. Եթե վարչական վարույթի ընթացքում հիմնավորվում է, որ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական քարոզչության համար կատարված ծախսերը գերազանցել են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ուղղություններով կատարված ծախսերի՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն չափը, ապա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ կիրառում է վարչական տույժ՝ հիմնադրամի՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի եռապատիկի չափով:».~~

~~5) 6-րդ մասի «Կենտրոնական ընտրական հանձնաժողով» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» բառերով.~~

6) 8-րդ մասի «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը» բառերով.

7) 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքների ավագանիների ընտրություններից հետո կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամում մնացած միջոցներն ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, փոխանցվում են կուսակցության հաշվին, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում հավասարապես բաշխվում են դաշինքը կազմող կուսակցությունների միջև, եթե այլ բան նախատեսված չէ կուսակցությունների դաշինքի որոշմամբ:».

8) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1-ին մասով.

«9.1. Մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրություններից հետո թեկնածուի նախընտրական հիմնադրամում մնացած միջոցներն ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, փոխանցվում են թեկնածուին առաջադրած կուսակցությանը, իսկ ինքնաառաջադրման դեպքում՝ փոխանցվում են թեկնածուին:».

9) 11-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Նոր հերթական կամ նոր ընտրություններին չմասնակցող թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամներում մնացած միջոցները տնօրինվում են սույն հոդվածի 9-րդ և 9.1-ին մասերով սահմանված կարգով:»:

-

**Հոդված 21.** Օրենսգրքի 28-րդ հոդվածում՝

1) վերնագրի «մուծումների» բառը փոխարինել «նվիրատվությունների» բառով.

~~2) 1-ին մասի առաջին պարբերության առաջին նախադասության «մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնում են վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո» բառերը փոխարինել «նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո» բառերով.~~

3) 1-ին մասի առաջին պարբերության երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայտարարագրին կցվում են սույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասում նշված, ինչպես նաև նախընտրական քարոզչության նպատակով կատարված և հայտարարագրման ենթակա այլ ծախսերը հիմնավորող փաստաթղթերը (պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ, հաշիվ-ապրանքագիր, վճարման անդորրագիր և այլն):».

~~4) 1-ին մասի երկրորդ պարբերության «մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն» բառերը փոխարինել «նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» բառերով.~~

~~5) 2-րդ մասի առաջին նախադասության «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը» բառերով.~~

6) 3-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) նախընտրական հիմնադրամ կատարված նվիրատվությունների ժամանակագրությունը, նվիրատվության գումարի չափը և նվիրատվություն կատարած անձանց մասին տվյալները.» .

7) 4-րդ մասի «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» բառերով:

~~**Հոդված 22.** Օրենսգրքի 29-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

-

~~«**Հոդված 29.** **Նախընտրական հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողությունը**~~

-

~~1. Նախընտրական հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սույն օրենսգրքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:~~

**Հոդված 104. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դրույթների:

2. Սույն օրենքի 67-71-րդ հոդվածները, 72-րդ հոդվածի 1-ին մասը և 73-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում Ազգային ժողովի հաջորդ հերթական ընտրությունների նշանակման օրվանից:

3. Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետը, 2-րդ հոդվածի 4-րդ կետը, 45-րդ հոդվածի 2-րդ կետը, 75-րդ հոդվածը, 82-րդ հոդվածի 2-րդ մասը, 83-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, 84-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 85-րդ հոդվածի 2-րդ մասը, 89-րդ հոդվածը, 91-րդ հոդվածը, 92-րդ հոդվածի 2-րդ մասը, 94-97-րդ հոդվածները, 98-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը, 99-րդ հոդվածը, 100-րդ հոդվածի 1-6-րդ մասերը, 101-103-րդ հոդվածները, ինչպես նաև սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը, 5-րդ հոդվածը, 6-րդ հոդվածի 1-ին մասը, 8-րդ հոդվածի 2-րդ մասը, 10-րդ հոդվածը, 11-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, 12-18-րդ հոդվածները, 19-րդ հոդվածի 1-10-րդ և 12-13-րդ մասերը, 20-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 7-9-րդ մասերը, 21-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերը, 49-րդ հոդվածը, 50-րդ հոդվածի 3-րդ մասը, 51-րդ հոդվածը, 52-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը և 54-րդ հոդվածը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին վերաբերելի մասով ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 30-րդ օրվանից:

4. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2022 թվականի հունվարի 1-ը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանում է Հանձնաժողովի համացանցային կայքի տեխնիկական նկարագիրը և կիրառվող էլեկտրոնային ձևանմուշները:

5. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2022 թվականի հունվարի 1-ը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մշակում է տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց կողմից իրենց հաշվառման վայրի ընտրողների ցուցակից դուրս գալու և իրենց նախընտրած վայրի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմումի և տեղեկանքի ձևերը:

6. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2022 թվականի հունվարի 1-ը, լիազոր մարմինը, սույն օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան, սահմանում է ընտրողներին քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, տեղամասային կենտրոնի հասցեի և ժամանակի մասին ծանուցելու կարգը:

~~7. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2023 թվականի հունվարի 1-ը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանում է նախընտրական հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների և հիմնադրամներից կատարվող ծախսերի հաշվառման կարգը:~~

~~8. Սույն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ, 7-րդ և 8-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:~~

~~9. Սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:~~

~~10. Սույն օրենքի 22-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:~~

11. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2022 թվականի հունվարի 1-ը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանում է դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի էլեկտրոնային ձևերը և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի միջոցով դրանք ներկայացնելու կարգը:

12. Սույն օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

13. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2022 թվականի հունվարի 1-ը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանում է ընտրական հանձնաժողովներ էլեկտրոնային եղանակով դիմումները ներկայացնելու կարգը:

14. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքից բխող իր որոշումները համապատասխանեցնում է սույն օրենքին: